ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հոկտեմբերի 2019թ. թիվ 574-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի Ն 11-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և հաշվի առնելով «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 27.09.2019թ. թիվ 058/224 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2018թ. հունվարի 17-ի «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները հաստատելու մասին» թիվ 11-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1. Հավելվածի «Վիրաբուժական ծառայություններ» մասում՝

1) «Որովայնային վիրաբուժական ծառայություններ» բաժինը լրացնել նոր՝

26	Արյունահոսության դադարեցում գաստրոսկոպիկ էլեկտրոկոագուլյացիայի մեթոդով	ավարտված դեպք	30 000

տողով:

2) «Պրոկտոլոգիական վիրաբուժական ծառայություններ» բաժնի 12-րդ տողում՝

ա. «ՈՒղիղ աղիքի պոլիպի հեռացում» բառերը փոխարինել «Պոլիպի հեռացում» բառերով,

բ. «80 000» թիվը փոխարինել «50 000» թվով:

2. Հավելվածի «Լաբորատոր ախտորոշիչ հետազոտությունների ցանկ» մասի «Ֆունկցիոնալ հետազոտություններ» բաժնում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 21-րդ տողում

ա. «Կոլոնոսկոպիա» բառը փոխարինել «Կոլոնոսկոպիա տեղային անզգայացմամբ» բառերով,

բ. «9 000» թիվը փոխարինել «20 000» թվով:

2) բաժինը լրացնել նոր՝ 25-28-րդ տողերով՝

25	Կոլոնոսկոպիա ընդհանուր անզգայացմամբ (ներառյալ բիոպսիա)	ավարտված դեպք	30 000
26	Գաստրոսկոպիա անզգայացումով	ավարտված դեպք	25 000
27	Գաստրոսկոպիա (ներառյալ HP թեսթ և բիոպսիա)	ավարտված դեպք	15 000
28	Ռեկտոսկոպիա	ավարտված դեպք	10 000

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

[redacted]

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 2
ք.Վանաձոր